ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ ՓՈՐՁԱՐԿՈՂ 2-ՐԴ, 5-ՐԴ, 7-ՐԴ ԵՎ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ ՓՈՐՁԱՐԿՈՂ 2-ՐԴ, 5-ՐԴ, 7-ՐԴ ԵՎ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում առարկայական չափորոշիչներ և ծրագրեր փորձարկող դասարանների 2021-2022 ուսումնական տարվա ուսումնական պլանը՝ համաձայն Հավելվածի։
2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսաբյուջետային վարչությանը՝ Տավուշի մարզի հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում առարկայական չափորոշիչներ և ծրագրեր փորձարկող դասարանների ֆինանսավորումն իրականացնել՝ հիմք ընդունելով Հավելվածով հաստատված ուսումնական պլանը։
3. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մնացած դասարանների ֆինանսավորումը իրականացնել՝ հիմք ընդունելով Հանրակրթական

հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները:

4. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչությանը՝ ապահովել ուսումնական հաստատությունների գործունեությունը՝ օրինակելի ուսումնական պլանների պահանջներին համապատասխան:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

/պաշտոնակատար/

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի

և սպորտի նախարարի

2021 թվականի հունիսի -ի

N -Ն հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ ՓՈՐՁԱՐԿՈՂ

2-ՐԴ, 5-ՐԴ, 7-ՐԴ ԵՎ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Ընդհանրական պարզաբանումներ

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝

Հաստատություն) առարկայական չափորոշիչներ և ծրագրեր փորձարկող 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների (այսուհետ՝ Փորձարկող դասարաններ) 2021-2022 ուսումնական տարվա ուսումնական պլանը (այսուհետ՝ Ուսումնական պլան), ունի երկու՝ պետական և դպրոցական բաղադրիչներ։

2. Ուսումնական պլանի պետական բաղադրիչով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանվում են տվյալ դասարանի պետական պարտադիր առարկայացանկում ընդգրկված առարկաներին հատկացված նվազագույն ժամաքանակները և երաշխավորված առարկայացանկը։
3. Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է Հաստատության կողմից սահմանված առարկաներին, պետական բաղադրիչով սահմանված առարկաներին և խմբակներին, ուսումնական նախագծերին՝ սովորողների ընտրությամբ։
4. Փորձարկվող դասարաններում դպրոցական (անհատական) բաղադրիչի ժամերը, որպես ուսումնական խմբակներ հատկացվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից երաշխավորված «Առողջ ապրելակերպ» դասընթացին, 8-11-րդ դասարաններում՝ «Մասնագիտական կողմնորոշման ակումբներ» ծրագրին, 10-11-րդ դասարանում՝ ռազմամարզական ճամբարներում՝ ՆԶՊ-ի ուսուցմանը։
5. Փորձարկող դասարաններում Հաստատության կողմից սահմանված առարկաների ծրագրերը երաշխավորվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից։
6. Փորձարկող դասարաններում սովորողների շաբաթական ծանրաբեռնվածությունը սահմանում է Հաստատությունը։
7. Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է պետական բաղադրիչով նախատեսված առարկաներին, Հաստատության կողմից սահմանված առարկաներին, խմբակներին, ուսումնական նախագծերին՝ սովորողների ընտրությամբ, ինչպես նաև Հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով։
8. Պետական և դպրոցական բաղադրիչները պարտադիր են և պետական Հաստատություններում ֆինանսավորվում են պետական բյուջեից։
9. Հաստատությունը Ուսումնական պլանի հիման վրա դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ հաստատում է տվյալ ուսումնական տարվա իր ուսումնական պլանը(ները)։
10. Հաստատության ավագ աստիճանի 10-րդ դասարանում դասավանդվում է առնվազն երկու օտար լեզու, որոնցից մեկը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ինչպես նաև կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված առարկայական ծրագիր ունեցող այլ լեզու։
11. Հաստատության ավագ աստիճանում ուսուցումն իրականացվում է Հիմանական և Նպատակային առարկայական ծրագրերով։ Հաստատությունում ձևավորվում են առարկան հիմանական և նպատակային ծրագրերով ուսումնասիրող ուսումնական խմբեր։
12. Հաստատության ավագ աստիճանի 10-րդ դասարանի և առանձին գործող ավագ դպրոցի 10-րդ դասարանի սովորողը առարկան կարող է ուսումնասիրել տվյալ ուսումնական առարկայի Հիմանական կամ

Նպատակային առարկայական ծրագրով և Հաստատության կողմից ընդգրկվում է այդ ծրագիրը ուսումնասիրող խումբ։

13. Այն դեպքում, երբ սովորողը պետական բաղադրիչով տրված առարկան ուսումնասիրում է Նպատակային ծրագրով, նույն առարկան Հիմնական ծրագրով չի ուսումնասիրում։
14. Այն սովորողները, որոնք Հաստատության ավագ աստիճանում ուսումնասիրում են բնագիտամաթեմատիկական առարկաները Նպատակային ծրագրերով, 10-րդ դասարանում «Հասարակություն, հասարակական գիտություններ» բնագավառից ուսումնասիրում են «Հասարակագիտություն» ինտեգրված ուսումնական առարկան:
15. Այն սովորողները, որոնք Հաստատության ավագ աստիճանում առարկայական ծրագիրը ուսումնասիրում են Նպատակային ծրագրով հայագիտական, հասարակագիտական առարկաներ և օտար լեզուներ, 10-րդ դասարանում «Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա» ուսումնական բնագավառից ուսումնասիրում են «Բնագիտություն» ինտեգրված ուսումնական առարկան:
16. Հաստատության՝ առարկայական չափորոշիչների և ծրագրերի փորձարկման մեջ չընդգրկված դասարաններում ուսումնական աշխատանքներն ամբողջությամբ իրականացվում են «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 և 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումների» պահանջներին համապատասխան:

Հաստատության փորձարկող դասարանների ուսումնական պլանի պարզաբանումներ

17. Հաստատության 2-րդ դասարանում պետական բաղադրիչը կազմված է «Մայրենի», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու», «Մաթեմատիկա» առարկաներից, իսկ դպրոցական բաղադրիչը կազմված է հանրակրթության պետական չափորոշչով սահմանված յուրաքանչյուր ուսումնական բնագավառի ուղղվածությանը համապատասխան մեկ կամ մի քանի ուսումնական առարկաներով կամ դասընթացներով և խմբակներով։
18. Հաստատության 2-րդ դասարանում առարկայացանկի ձևավորման սկզբունքներն են.
1) մաթեմատիկան ներկայացվում է մեկ ինտեգրված առարկայով, ինչպես նաև մաթեմատիկական մտածողությունը, քննադատական մտածողությունը, կանխատեսումներ կատարելու ունակությունները շախմատ խաղի ուսուցման միջոցով զարգացնող առանձին առարկայով (օրինակ՝ «Մաթեմատիկա», «Շախմատ» առարկաներ),

2) տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կրթությունը ներկայացվում է թվային սարքերից և ծրագրերից օգտվելու կարողություններ

ձևավորող առանձին կամ ինտեգրված ուսումնական առարկայով (օրինակ՝ «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկա),

3) տեխնոլոգիական (ճարտարագիտական) կրթությունը ներկայացվում է առանձին կամ ինտեգրված ուսումնական առարկայով (օրինակ՝ «Տեխնոլոգիա» առարկա),

4) «Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ)» բնագավառի բնագիտական բովանդակությունը, «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն», «Հայրենագիտություն» և «Հասարակություն, հասարակական գիտություններ» բնագավառները հանրակրթական ընդհանուր պետական ծրագրի ներկայացվում են մարդուն և նրա շրջակա աշխարհն ուսումնասիրող մեկ ինտեգրված ուսումնական առարկայով (օրինակ՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկա),

5) «Օտար լեզուներ» բնագավառը ներկայացվում է մեկ օտար լեզվով, որը ռուսերենն է:

6) «Հայոց լեզու և գրականություն» բնագավառը ներկայացվում է հայոց լեզուն և գրականությունը ներկայացնող մեկ ինտեգրված առարկայով (օրինակ՝ «Մայրենի» առարկա),

7) «Արվեստ և արհեստ» բնագավառը ներկայացվում է առանձին և ինտեգրված առարկաներով (օրինակ՝ «Կերպարվեստ», «Երաժշտություն» առարկաներ, «Արվեստ» ինտեգրված առարկա),

8) «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն» բնագավառը ներկայացվում է առանձին առարկաներով (օրինակ՝ «Ֆիզկուլտուրա» առարկա).

19. **Հաստատության 5-րդ դասարանում առարկայացանկի ձևավորման սկզբունքներն են.**

- ԲՏՃՄ բնագավառը ներկայացվում է բնագիտություն ինտեգրված առարկայով (օրինակ՝ «Բնություն» առարկա).
- մաթեմատիկան ներկայացվում է մեկ ինտեգրված առարկայով (օրինակ՝ «Մաթեմատիկա»),
- տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կրթությունը ներկայացվում է թվային սարքերից և ծրագրերից օգտվելու կարողություններ ձևավորող առանձին կամ ինտեգրված ուսումնական առարկայով (օրինակ՝ «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկա),
- տեխնոլոգիական (ճարտարագիտական) կրթությունը առանձին կամ ինտեգրված ուսումնական առարկայով (օրինակ՝ «Տեխնոլոգիա» առարկա),
- «Օտար լեզուներ» բնագավառը, բացի ռուսերենից, ներկայացվում է առնվազն ևս մեկ օտար լեզվով,
- «Հայոց լեզու և գրականություն» բնագավառը ներկայացվում է հայոց լեզուն և գրականությունը ներկայացնող մեկ ինտեգրված առարկայով (օրինակ՝ «Մայրենի» առարկա),

- «Հայրենագիտություն» և «Հասարակություն, հասարակական գիտություններ» բնագավառները ներկայացվում են Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունը, մշակույթը և կրոնը, աշխարհագրությունը, հասարակական կյանքի ոլորտները ներկայացնող մեկ ինտեգրված առարկայով (օրինակ՝ «Իմ հայրենիքը» առարկա),
- «Արվեստ և արհեստ» բնագավառը ներկայացվում է առանձին և ինտեգրված առարկաներով (օրինակ՝ «Կերպարվեստ», «Երաժշտություն» առարկաներ, «Արվեստ» ինտեգրված առարկա),
- «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն» բնագավառը ներկայացվում է առանձին առարկաներով (օրինակ՝ «Ֆիզկուլտուրա» առարկա).

20. **Հաստատության 7-րդ դասարանում առարկայացանկի ձևավորման սկզբունքներն են.**
    1) ԲՏՃՄ բնագավառում՝

ա. բնագիտությունը ներկայացվում է առանձին բնագիտական առարկաներով (օրինակ՝ «Ֆիզիկա», «Աշխարհագրություն» «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաներ),

բ. մաթեմատիկան ներկայացվում է առանձին մաթեմատիկական առարկաներով («Հանրահաշիվ», Երկրաչափություն» առարկաներ),

գ. տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կրթությունը ներկայացվում է կիրառական ծրագրերի ուսումնասիրության միջոցով կյանքի պահանջներին և ապագա կրթությանը, աշխատանքային գործունեությանը բավարարող համակարգչային անհրաժեշտ հմտություններ զարգացնող առանձին ուսումնական առարկայով (օրինակ՝ «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկա),

2) «Օտար լեզուներ» բնագավառը, բացի ռուսերենից, ներկայացվում է առնվազն ևս մեկ օտար լեզվով:

3) «Հայոց լեզու և գրականություն» բնագավառը ներկայացվում է հայոց լեզուն և գրականությունը ուսումնասիրող առանձին առարկաներով (օրինակ՝ «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաներ).

4) «Հայրենագիտություն» բնագավառը ներկայացվում է առանձին առարկայով (օրինակ՝ «Հայոց պատմություն» առարկա).

5) «Հասարակություն, հասարակական գիտություններ» բնագավառն ընդգրկում է համաշխարհային պատմությունը և հասարակական կյանքի ոլորտները ներկայացնող առանձին առարկաներ («Համաշխարհային պատմություն», «Հասարակագիտություն» առարկաներ).

6) «Արվեստ և արհեստ» բնագավառը ներկայացվում է առանձին և ինտեգրված առարկաներով (օրինակ՝ «Կերպարվեստ», «Երաժշտություն», «Թատրոն», «Արվեստ» ինտեգրված առարկա).

7) «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն» բնագավառը

ներկայացվում է առանձին առարկաներով (օրինակ՝ «Ֆիզկուլտուրա»).

21. 10-րդ դասարանում ուսումնական պլանի պետական բաղադրիչը կազմված է «Հայոց լեզու», «Հայ գրականություն», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Օտար լեզու», «Հայոց պատմություն», «ՆԶՊ» և «Ֆիզկուլտուրա» առարկաներից և առնվազն մեկ ընտրովի առարկայից՝ «Բնագիտություն» և (կամ) «Հասարակագիտություն»։
22. Միջնակարգ դպրոցի ավագ դասարանը և առանձին գործող ավագ դպրոցի դասարանը տվալ ուսումնական առարկան նույն ծրագրով ուսումնասիրող սովորողներից կազմված ուսումնական խումբ է:
23. Միջնակարգ դպրոցի ավագ դասարանի և առանձին գործող ավագ դպրոցի դասարանի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչը հատկացվում է պետական բաղադրիչով սահմանված առարկաներին, սովորողի կողմից ընտրված, Հաստատության կողմից սահմանված առարկաներին, ինչպես նաև խմբակներին և ուսումնական նախագծերին:
24. 7-րդ և 10-րդ դասարաններում յուրաքանչյուր սովորող տարեկան իրականացնում է առնվազն մեկ ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից կամ առարկաներից։
25. Ուսումնական պլանի պետական բաղադրիչի առարկաները ուսումնասիրվում են Հիմնական ծրագրերով, իսկ դպրոցական բաղադրիչի առարկաները՝ Նպատակային ծրագրերով:
26. 10-րդ դասարանում ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչը ձևավորվում է յուրաքանչյուր սովորողի համար առանձին և կազմված է սովորողի կողմից ընտրված առարկաներից։
27. Հաստատության (միջնակարգ և առանձին գործող ավագ դպրոց) առանձին դասարանների ուսումնական պլանը կազմվում է տվյալ դասարանի ուսումնական պլանի պետական բաղադրիչի և սովորողի կողմից ընտրված առարկաների հիման վրա:
28. Ուսումնական առարկան Հիմնական կամ Նպատակային ծրագրերով ուսումնասիրել ցանկացող սովորողներից ձևավորվում են առանձին ուսումնական խմբեր, եթե սովորողների թիվը չի գերազանցում 25-ը: Եթե ուսումնական խմբում սովորողների թիվը 25-ից ավելի է, ապա ձևավորվում է նոր ուսումնական խումբ։
29. Այն դեպքում, երբ 10-րդ դասարանում ուսումնական պլանի պետական բաղադրիչի ուսումնական առարկայի ծրագրերով սահմանված Հիմնական կամ Նպատակային ծրագրեր ընտրած սովորողներից ձևավորված խմբի թվաքանակը չի գերազանցում 25-ը, կարող է կազմվել մեկ ուսումնական խումբ երկհամակազմ դասարանի ձևավորման սկզբունքով, որն ուսումնասիրում է նույն առարկան տարբեր ժամաքանակներով։
30. Տարրական դպրոցի 2-րդ դասարանում «Ռուսաց լեզու» և «Օտար լեզու», միջին դպրոցի 5-րդ և 7-րդ և ավագ դպրոցի 10-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» և «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» (համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների դասաժամերին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե սովորողների թիվը 20 և ավելի է:
31. Հաստատության ուսումնական պարապմունքները սկսելու, ավարտելու, ուսումնական պարապմունքների ընթացքում տրվող արձակուրդների

ժամկետները կարգավորվում են «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 և 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի N……..հրամանի Հավելված 1-ի, իսկ մյուս դասարաններում ուսումնական գործընթացը կազմակերպվում է Հավելված 2-ի պահանջներին համապատասխան, բացառությամբ Հաստատության Փորձարկող դասարանների: